ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ 2011-2012 ԹԹ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆՆԵՐ

ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ՈԼՈՐՏ

(քրեական գործեր, մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ոլորտին և դատական ակտի կատարման հետ կապված հարցերին վերաբերվող միջնորդություններ)

2012 թվականի ընթացքում ՀՀ առաջին ատյանի դատարաններում ստացվել է 4246քրեական գործ, մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ոլորտին ու դատական ակտի կատարման հետ կապված հարցերին վերաբերվող 14744 միջնորդություն *(ընդհանուրը՝ 4246+14744=18990)*:

Ստացված 4246 քրեական գործից ավարտվել է 3281-ը (77%):

Ստացված 14744 միջնորդություններից ավարտվել է 14533-ը (98,6%):

(Ընդհանուր առմամբ ավարտվել է 17814 դատական գործ (3281+14533=17814) 93%*):*

Համեմատության կարգով նշենք, որ 2011 թվականի ընթացքում ՀՀ առաջին ատյանի դատարաններում ստացվել է 4530 քրեական գործ, մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ոլորտին ու դատական ակտի կատարման հետ կապված հարցերին վերաբերվող 17635 միջնորդություն *(ընդհանուրը՝ 4530+17635=22165)*:

Ստացված 4530 քրեական գործից ավարտվել է 3608-ը (79,6%):

Ստացված 17635 միջնորդություններից ավարտվել է 17481-ը (99,1%):

(Ընդհանուր առմամբ ավարտվել է 21089 դատական գործ (3608+17481=21089) 95%*):*

2012 թվականի ընթացքում ՀՀ առաջին ատյանի դատարանների կողմից ավարտված 3281 քրեական գործերով դատական ակտ է կայացվել 4391 անձի վերաբերյալ, այդ թվում՝ 3089 գործով (94,1%) կայացվել է դատավճիռ՝ 4156 անձի նկատմամբ, 163 գործով (5%) կայացվել է քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշում՝ 206 անձի վերաբերյալ, 29 գործով (0,9%)՝ 29 անմեղսունակ անձանց վերաբերյալ կիրառվել է բժշկական բնույթի հարկադրական միջոցներ:

Համեմատության կարգով նշենք, որ 2011 թվականի ընթացքում ՀՀ առաջին ատյանի դատարանների կողմից ավարտված 3608 քրեական գործերով դատական ակտ է կայացվել 4874 անձի վերաբերյալ, այդ թվում՝ 3126 գործով (86,6%) կայացվել է դատավճիռ՝ 4254 անձի

նկատմամբ, 425 գործով (11,8%) կայացվել է քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշում՝ 561 անձի (561=466+95, որից 466 անձի վերաբերյալ՝ համաներման ակտի կիրառման հիմքով, 95 անձի վերաբերյալ՝ օրենքով նախատեսված այլ հիմքերով) նկատմամբ, 57 գործով (1,6%)՝ 59 անմեղսունակ անձանց վերաբերյալ կիրառվել է բժշկական բնույթի հարկադրական միջոցներ:

2012 թվականի ընթացքում լրիվ կամ մասնակի արդարացվել է 84 (27+57=84) 2% (84:4156*100=2%) անձ, որից 27-ը (27:4156*100=0,6%)՝ մասնակի, իսկ 57-ը (57:4156*100=1,4)՝ լրիվ:

Համեմատության կարգով նշենք, որ 2011 թվականի ընթացքում լրիվ կամ մասնակի արդարացվել է 77 (23+54=77) 1,8% (77:4254*100=1,8%) անձ, որից 23-ը (23:4254*100=0,54%)՝ մասնակի, իսկ 54-ը (54:4254*100=1,3%)՝ լրիվ:

2012 թվականի ընթացքում դատապարտվել է 4099 (4156-57=4099) 98,6% (4099:4156*100=98,6%) անձ:

2012 թվականի ընթացքում դատապարտված 4099 անձանցից ազատազրկման ձևով ռեալ պատիժ է նշանակվել 2193(53,5%) անձի նկատմամբ: Պատիժը պայմանականորեն չի կիրառվել 762 անձի նկատմամբ (762:4099*100=18.6%):

Համեմատության կարգով նշենք, որ 2011 թվականի ընթացքում դատապարտվել է 4200 (4254-54=4200) 98,7% (4200:4254*100=98,7%) անձ:

2011 թվականի ընթացքում դատապարտված 4200 անձանցից ազատազրկման ձևով ռեալ պատիժ է նշանակվել 1960 (46,7%) անձի նկատմամբ: Պատիժը պայմանականորեն չի կիրառվել 541 անձի նկատմամբ (541:4200*100=13%):

Այսպիսով, 2012 թվականի ընթացքում՝ 2011 թվականի համեմատությամբ, դատարաններում ստացված քրեական գործերի քանակը նվազել է 284-ով (4530-4246=284) 6,3% (284:4530*100=6,3%), ըստ ավարտված գործերի՝ դատի տրված անձանց թիվը նվազել է 483-ով (4874-4391=483) 9,9% (483:4874*100=9,9%): Անձանց թիվը, որոնց նկատմամբ պատիժը պայմանականորեն չի կիրառվել, աճել է 221-ով (762-541=221) 40,8% (221:541*100=40,8%), դատապարտվածների թիվը նվազել է՝ 101-ով (4200-4099=101) 2,4% (101:4200*100=2.4%), իսկ արդարացվածների թիվն աճել է 7-ով (84-77=7) 9,9% (7:77*100=9,9%):

Հարկ է նշել, որ ինչպես 2011 թվականին, այնպես էլ 2012 թվականին դատապարտված անձանց թվում զգալի թիվ են կազմել գողության և խարդախության համար դատապարտվածները:

Այսպես.

- 2011 թվականի ընթացքում գողության համար (ՀՀ քր. օր. 177-րդ հոդված) դատապարտվել է 812 անձ (դատապարտվածների թվի 19,3%-ը, 812:4200*100=19,3%), խարդախության համար (ՀՀ քր. օր. 178-րդ հոդված)՝ 172 անձ (դատապարտվածների թվի 4,1%-ը, 172:4200*100=4,1%), յուրացնելու կամ վատնելու համար (ՀՀ քր. օր. 179-րդ հոդված)՝ 73 անձ (դատապարտվածների թվի 1,7%-ը, 73:4200*100=1,7%):

- 2012 թվականի ընթացքում գողության համար (ՀՀ քր. օր. 177-րդ հոդված) դատապարտվել է 584 անձ (դատապարտվածների թվի 14,2%-ը, 584:4099*100=14,2%), խարդախության համար (ՀՀ քր. օր. 178-րդ հոդված)՝ 134 անձ (դատապարտվածների թվի 3,3%-ը, 134:4099*100=3,3%), յուրացնելու կամ վատնելու համար (ՀՀ քր. օր. 179-րդ հոդված)՝ 56 անձ (դատապարտվածների թվի 1,4%-ը, 56:4099*100=1,4%):

Այսպիսով, 2012 թվականի ընթացքում՝ 2011 թվականի համեմատությամբ, գողության համար դատապարտվածների թիվը նվազել է 228-ով (812-584=228) 28,1% (228:812*100=28,1%), խարդախության համար դատապարտվածների թիվը նվազել է 38-ով (172-134=38) 22,1% (38:172*100=22,1%), յուրացնելու կամ վատնելու համար դատապարտվածների թիվը նվազել է14-ով (73-56=17) 23,3% (17:73*100=23,3%):

Ի դեպ, զգալի նվազում է արձանագրվել նաև համեմատվող ժամանակահատվածում դիտարկված ներքոհիշյալ հանցագործությունների համար դատապարտվածների թվում:

Այսպես.

- Խուլիգանության համար (ՀՀ քր. օր. 258-րդ հոդված) 2011 թվականին դատապարտվել է 502 անձ, իսկ 2012 թվականին՝ 299, նվազումը՝ 203 (502-299=203) անձ (40,4%):

- Իշխանությունը չարաշահելու, իշխանազանցության կամ իշխանության անգործության համար (ՀՀ քր. օր. 375-րդ հոդված) 2011 թվականին դատապարտվել է 91 անձ, իսկ 2012 թվականին՝ 79, նվազումը՝ 12 (91-79=12) անձ (13,2%):

- Իշխանության ներկայացուցչի նկատմամբ բռնություն գործադրելու համար (ՀՀ քր. օր. 316-րդ հոդված) 2011 թվականին դատապարտվել է 61 անձ, իսկ 2012 թվականին՝ 37 , նվազումը՝ 24 (61-37=24) անձ (39,3%):

- Սպանության համար (ՀՀ քր. օր. 104-րդ հոդված) 2011 թվականին դատապարտվել է 55 անձ, իսկ 2012 թվականին՝ 43, նվազումը՝ 12 (55-43=12) անձ (21,8%):

- Ավազակության համար (ՀՀ քր. օր. 175-րդ հոդված) 2011 թվականին դատապարտվել է 72 անձ, իսկ 2012 թվականին՝ 37, նվազումը՝ 35 (72-37=35) անձ (48,6%):

- Շորթման համար (ՀՀ քր. օր. 182-րդ հոդված) 2011 թվականին դատապարտվել է 12 անձ, իսկ 2012 թվականին՝ 6, նվազումը՝ 6 (12-6=6) անձ (50%):

- Իրացնելու նպատակով թմրամիջոցների, հոգեմետ նյութերի, դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության համար (ՀՀ քր. օր. 266-րդ հոդված) 2011 թվականին դատապարտվել է 138 անձ, իսկ 2012 թվականին՝ 112, նվազումը՝ 26 (138-112=26) անձ (18,9%):

Միաժամանակ, աճ է արձանագրվել ստորև նարկայացվող՝ դիտարկված հանցագործությունների համար դատապարտվածների թվում:

Այսպես.

- Ճանապարհային երթևեկության և տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելու համար (ՀՀ քր. օր. 242-րդ հոդված) 2011 թվականին դատապարտվել է 107 անձ, իսկ 2012 թվականին՝ 130, աճը՝ 23 (130-107=23) անձ (21,5%):

- Ժամկետային զինվորական կամ այլընտրանքային ծառայությունից, վարժական հավաքներից կամ զորահավաքներից խուսափելու համար (ՀՀ քր. օր. 327-րդ հոդված) 2011 թվականին դատապարտվել է 19 անձ, իսկ 2012 թվականին՝ 21, աճը՝ 2 (21-19=2) անձ (10,5%):

- Զինծառայողների փոխհարաբերությունների կանոնագրքային կանոնները ստորադասության հարաբերությունների բացակայության դեպքում խախտելու համար (ՀՀ քր. օր. 359-րդ հոդված) 2011 թվականին դատապարտվել է 195 անձ, իսկ 2012 թվականին՝ 302, աճը՝ 107 (302-195=107) անձ (54,9%):

- Անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցմամբ առողջությանը ծանր կամ միջին ծանրության վնաս պատճառելու համար (ՀՀ քր. օր. 116-րդ հոդված) 2011 թվականին դատապարտվել է 8 անձ, իսկ 2012 թվականին՝ 20, աճը՝ 12 (20-8=12) անձ (150%):

- Ծեծի համար (ՀՀ քր. օր. 118-րդ հոդված) 2011 թվականին դատապարտվել է 31 անձ, իսկ 2012 թվականին՝ 56, աճը՝ 25 (56-31=25) անձ (80,6%):

- Առանց իրացնելու նպատակի թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության համար (ՀՀ քր. օր. 268-րդ հոդված) 2011 թվականին դատապարտվել է 347 անձ, իսկ 2012 թվականին՝ 408, աճը՝ 61 (408-347=61) անձ (17,6%):

2012 թվականի ընթացքում ՀՀ առաջին ատյանի դատարաններում ստացված վերոհիշյալ 14744 միջնորդություններից 12502 (84,8%)-ը վերաբերվել է մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ոլորտին, որից 2621 (21%)-ը (2621:12502*100=21%) հանդիսացել է կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին միջնորդություն: Նշվածից 2497-ը (95,3%) (2497:2621*100=95.3%) բավարարվել է, 114-ը (4,3%) (114:2621*100=4.3%) մերժվել, իսկ 10-ը (0,4%) (10:2621*100=0.4%) թողնվել է առանց քննության: Նույն ժամանակահատվածում ՀՀ առաջին ատյանի դատարաններում ստացվել է գրավը որպես կալանավորման այլընտրանքային խափանման միջոց կիրառելու մասին 441 միջնորդություն, որից 134-ը (30,3%) բավարարվել է, 273-ը (62%)՝ մերժվել, 31-ը (7%)՝ թողնվել է առանց քննության, իսկ 3-ը (0,7%)՝ 2012 թվականի դեկտեմբերի 28-ի դրությամբ եղել է անավարտ:

Համեմատության կարգով նշենք, որ 2011 թվականի ընթացքում ՀՀ առաջին ատյանի դատարաններում ստացված վերոհիշյալ 17635 միջնորդություններից 13946 (79,1%)-ը վերաբերվել է մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ոլորտին, որից 3262 (23,4%)-ը հանդիսացել է կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին միջնորդություն: Դրանցից 3088-ը (94,7%) բավարարվել է, 164-ը (5%) մերժվել, իսկ 10-ը (0,3%) թողնվել է առանց քննության: Նույն ժամանակահատվածում ՀՀ առաջին ատյանի դատարաններում ստացվել է գրավը որպես կալանավորման այլընտրանքային խափանման միջոց կիրառելու մասին 448 միջնորդություն, որից 131-ը (29,2%) բավարարվել է, 291-ը (65%)՝ մերժվել, 20-ը (4,5%)՝ թողնվել է առանց քննության, իսկ 6-ը (1,3%)՝ 2011 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ եղել է անավարտ:

ՀՀ ՎԵՐԱՔՆՆԻՉ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանում 2012 թվականի ընթացքում ստացվել է 2557վերաքննիչ բողոք՝ 2245 դատական ակտի դեմ *(այսինքն՝ բողոքարկվել է առաջին ատյանի դատարանների կողմից կայացված դատական ակտերի ընդամենը 12,6%-ը (2245:17814*100=12,6)):* Բերված բողոքներից 1556-ով (60,9%) բողոքարկվել է քրեական գործերով կայացված գործն ըստ էության լուծող 1300 դատական ակտ, իսկ մնացած՝ 1001-ով (39,1%) բողոքարկվել է մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ոլորտին և դատական ակտի կատարման հետ կապված հարցերին վերաբերվող 945 դատական ակտ:

Քրեական գործերով բողոքարկված 1300 դատական ակտերով վերաքննիչ վարույթն ավարտվել է 1198-ով (92,2%), այդ թվում՝ 979 (81,7%) դատական ակտ թողնվել է անփոփոխ, 219-ը (18,3%)՝ բեկանվել է: Բեկանված 219 ակտերից 16-ով (7,3%) գործն ուղարկվել է ստորադաս դատարան՝ նոր քննության, 203-ով (92,7%) ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխվել կամ կայացվել է գործն ըստ էության լուծող նոր դատական ակտ:

Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ոլորտին և դատական ակտի կատարման հետ կապված հարցերին վերաբերվող դատական ակտերի դեմ բերված 1001 բողոքներից բավարարվել է 73-ը (7,3%), մերժվել՝ 798-ը (79,7%), 55-ը (5,5%) թողնվել է առանց քննության, 31-ով (3,1%) վերաքննիչ վարույթը կարճվել է, իսկ 44-ը (4,4%)՝ 2012 թվականի դեկտեմբերի 28-ի դրությամբ եղել են անավարտ:

Բողոքարկված 2245 դատական ակտի դեմ բերված ընդհանուր 2557 բողոքներից 354-ը (13,8%) ներկայացվել է դատախազության կողմից, որոնցից 41 (11,6%) բողոքի քննություն 2012 թվականի դեկտեմբերի 28-ի դրությամբ եղել է անավարտ: Ընթացքը լուծված 313/354-41=313/ բողոքներից 56-ը (17,9%) բավարարվել է, 243-ը (77,7%)՝ մերժվել, 11-ով (3,5%) վերաքննիչ վարույթը կարճվել է, իսկ 3-ով (0,9%)՝ բողոքը թողնվել է առանց քննության:

Համեմատության կարգով նշենք, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանում 2011 թվականի ընթացքում ստացվել է 3099 վերաքննիչ բողոք՝ 2618 դատական ակտի դեմ */այսինքն՝ բողոքարկվել է առաջին ատյանի դատարանների կողմից կայացված դատական ակտերի ընդամենը 12,4%-ը /2618:21089*100=12,4/:*Բերված բողոքներից 2042-ով (66%) բողոքարկվել է քրեական գործերով կայացված գործն ըստ էության լուծող 1653 դատական ակտ, իսկ մնացած՝ 1057-ով (34%) բողոքարկվել է մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ոլորտին և դատական ակտի կատարման հետ կապված հարցերին վերաբերվող 965 դատական ակտ:

Քրեական գործերով բողոքարկված 1653 դատական ակտերով վերաքննիչ վարույթն ավարտվել է 1542-ով (93,3%), այդ թվում՝ 1344 (87,2%) դատական ակտ թողնվել է անփոփոխ, 198-ը (12,8%)՝ բեկանվել է: Բեկանված 198 ակտերից 21-ով (10,6%) գործն ուղարկվել է ստորադաս դատարան՝ նոր քննության, 177-ով (89,4%) ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխվել կամ կայացվել է գործն ըստ էության լուծող նոր դատական ակտ:

Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ոլորտին և դատական ակտի կատարման հետ կապված հարցերին վերաբերվող դատական ակտերի դեմ բերված 1057 բողոքներից բավարարվել է 102-ը (9,7%), մերժվել՝ 773-ը (73,1%), 91-ը (8,6%)

թողնվել է առանց քննության, 61-ով (5,8%) վերաքննիչ վարույթը կարճվել է, իսկ 30-ը (2,8%)՝ 2011 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ եղել են անավարտ:

Բողոքարկված 2618 դատական ակտի դեմ բերված ընդհանուր 3099 բողոքներից 227-ը (8,7%) ներկայացվել է դատախազության կողմից, որոնցից 47 (20,8%) բողոքի քննություն 2011 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ եղել է անավարտ: Ընթացքը լուծված 180 /227-47=180/ բողոքներից 35-ը (19,4%) բավարարվել է, 132-ը (73,3%)՝ մերժվել, 13-ով (7,3%) վերաքննիչ վարույթը կարճվել է:

Այսպիսով, 2012 թվականի ընթացքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանում ստացված բողոքների ընդհանուր թիվը նվազել է 542-ով (3099-2557=542) 17,5% (542:3099*100=17,5%), այդ թվում՝ քրեական գործերով գործն ըստ էության լուծող դատական ակտերի դեմ բերված բողոքների թիվը նվազել է 486-ով (2042-1556=486) 23,8% (486:2042*100=23,8%), մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ոլորտին և դատական ակտի կատարման հետ կապված հարցերին վերաբերվող դատական ակտերի դեմ բերված բողոքների թիվը՝ 56-ով (1057-1001=56) 5,3% (56:1057*100=5,3%):

Քրեական գործերով ավարտված վերաքննիչ վարույթների թիվը նվազել է 344-ով (1542-1198=344) 22,3%, անփոփոխ թողնված դատական ակտերի թիվը նվազել է 365-ով (1344-979=365) 27,2%, իսկ բեկանվածների թիվն աճել է 21-ով (219-198=21) 10,6%:

Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ոլորտին և դատական ակտի կատարման հետ կապված հարցերին վերաբերվող դատական ակտերի դեմ բերված բողոքներից բավարարվածների թիվը նվազել է 29-ով (102-73=29) 28,4%, մերժվածների թիվն աճել է՝ 25-ով (798-773=25) 3,2%, առանց քննության թողնվածների թիվը նվազել է 36-ով (91-55=36) 39,6%, վերաքննիչ վարույթի կարճումների քանակը՝ 30-ով (61-31=30) 49,2%:

Այսպիսով, բերված բողոքների ընդհանուր թիվը նվազել է 542-ով (3099-2557=542) 17,5%, ավարտված վերաքննիչ վարույթների արդյունքում բավարարված բողոքների ընդհանուր թիվը նվազել է 8-ով ((198+102=300)-(219+73=292)=8)) 2,7%, իսկ մերժվածների թիվը՝ 340-ով ((1344+773=2117)-(979+798=1777)=340))16,1%:

Դատախազության կողմից բերված բողոքների ընդհանուր թիվն աճել է 127-ով (354-227=127) 55,9% (127:227*100=55,9%), այդ թվում՝ ավարտված վերաքննիչ վարույթների արդյունքում բավարարված բողոքների թիվն աճել է 21-ով (56-35=21) 60%, իսկ մերժվածների թիվը՝ 111-ով (243-132=111) 84,1%:

*Այսպիսով, ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններում 2012 թվականի ընթացքում ավարտված գործերով կայացված 17814 (3281+14533=17814) դատական ակտերից բողոքարկվել է 2245-ը՝ 12,6% (2245:17814*100=12,6%), որից բեկանվել է 292-ը (219+73=292) 13%, այսինքն՝ ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններում 2012 թվականի ընթացքում ավարտված գործերի կայունությունը կազմում է 98,4% (17814-292=17522:17814*100=98,4%), իսկ բողոքարկված գործերի կայունությունը կազմում է 86,9% (2245-292=1953:2245*100=86,9%):*

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏ

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատում 2012 թվականի ընթացքում ստացվել է 1231 վճռաբեկ բողոք, որոնցով բողոքարկվել է 1067 դատական ակտ:

Բերված 1231 բողոքներից 991-ը (80,5%) վերադարձվել է՝ 886 որոշմամբ, 72-ն (5,8%) ընդունվել է վարույթ, 51-ը (4,2%)՝ թողնվել է առանց քննության, 2-ով (0,2%) մերժվել է վերանայման վարույթի հարուցումը, 115 (9,3%) բողոքի ընթացքը 2012 թվականի դեկտեմբերի 28-ի դրությամբ եղել է անավարտ:

Վարույթ ընդունված 72 բողոքներից՝

- 16-ը (վարույթ ընդունվածի 22,2%, ընդհանուր բողոքների 1,3%) մերժվել է,
- 20-ը (վարույթ ընդունվածի 27,8%, ընդհանուր բողոքների 1,6%) բավարարվել է ամբողջությամբ,
- 29-ը (վարույթ ընդունվածի 40,3%, ընդհանուր բողոքների 2,6 %)՝ բավարարվել է մասնակի,
- 7-ի (վարույթ ընդունվածի 9,7%, ընդհանուր բողոքների 0,6 %) ընթացքը 2012 թվականի դեկտեմբերի 28-ի դրությամբ եղել է անավարտ:

Ընդ որում, ամբողջությամբ բավարարված հիշյալ 20 բողոքներից 3-ով բեկանվել է վերաքննիչ դատարանի դատական ակտը և օրինական ուժ է տրվել առաջին ատյանի դատարանի դատական ակտին:

- Բերված 1231 բողոքներից 138-ը (11,2%.) ներկայացվել է ՀՀ գլխավոր դատախազության կողմից, որից 101-ը (73,2%) վերադարձվել է, 23-ն (16,7%) ընդունվել է վարույթ, 1-ը (0,7%) թողնվել է առանց քննության, իսկ 13-ի (9,4%) ընթացքը 2012 թվականի դեկտեմբերի 28-ի դրությամբ եղել է անավարտ: Վարույթ ընդունված 23 բողոքներից 6-ը

բավարարվել է ամբողջությամբ, 8-ը բավարարվել է մասնակի, 8-ը մերժվել է, իսկ 1-ի ընթացքը 2012 թվականի դեկտեմբերի 28-ի դրությամբ եղել է անավարտ:

- Բերված 1231 բողոքներից 1093-ը (88,8%) ներկայացվել է դատավարության այլ մասնակիցների կողմից, որից 890-ը (81,4%) վերադարձվել է, 49-ն (4,5%) ընդունվել է վարույթ, 50-ը (4,6%) թողնվել է առանց քննության, 2-ով (0,2%) մերժվել է վերանայման վարույթի հարուցումը, իսկ 102-ի (9,3%) ընթացքը 2012 թվականի դեկտեմբերի 28-ի դրությամբ եղել է անավարտ: Վարույթ ընդունված 49 բողոքներից 14-ը բավարարվել է ամբողջությամբ, 21-ը բավարարվել է մասնակի, 8-ը մերժվել է, իսկ 6-ի ընթացքը 2012 թվականի դեկտեմբերի 28-ի դրությամբ եղել է անավարտ:

Համեմատության կարգով նշենք, որ 2011թ. ընթացքում ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատում ստացվել է 1203 վճռաբեկ բողոք, որոնցով բողոքարկվել է 977 դատական ակտ:

Բերված 1203 բողոքներից 976-ը (81,1%) վերադարձվել է՝ 823 որոշմամբ, 45-ն (3,7%) ընդունվել է վարույթ, 76-ը (6,3%)՝ թողնվել է առանց քննության, 106 (8,9%) բողոքի ընթացքը 2011 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ եղել է անավարտ:

Վարույթ ընդունված 45 բողոքներից՝

- 13-ը (վարույթ ընդունվածի 28,8%, ընդհանուր բողոքների 1.1%) մերժվել է,
- 16-ը (վարույթ ընդունվածի 35,5%, ընդհանուր բողոքների 1.3%) բավարարվել է ամբողջությամբ,
- 12-ը (վարույթ ընդունվածի 26,6%, ընդհանուր բողոքների 1%) բավարարվել է մասնակի,
- 4-ի (վարույթ ընդունվածի 8,9%, ընդհանուր բողոքների 0.3%) ընթացքը 2011 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ եղել է անավարտ:

Ընդ որում, ամբողջությամբ բավարարված հիշյալ 16 բողոքներից 5-ով բեկանվել է վերաքննիչ դատարանի դատական ակտը և օրինական ուժ է տրվել առաջին ատյանի դատարանի դատական ակտին:

- Բողոքարկված 977 դատական ակտի դեմ բերված 1203 բողոքներից 162-ը (16,5%) ներկայացվել է դատախազության կողմից, որից 15-ի (9,2%) ընթացքը 2011 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ եղել է անավարտ: Ընթացք տրված 147 (91%) /162-15=147/ բողոքներից 128-ը (87%) վերադարձվել է, 7-ը (4,8%) բավարարվել (5-ը՝ ամբողջությամբ, 2-ը՝ մասնակի), 9-ը՝ (6,1%) մերժվել, 3-ը (2,1%) թողնվել է առանց քննության:

- Բերված 1203 բողոքներից 1041-ը (86,5%) ներկայացվել է դատավարության այլ մասնակիցների կողմից, որից 95-ի (9,1%) ընթացքը 2011 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ եղել է անավարտ: Ընթացք տրված 946 (91%) /1041-95=946/ բողոքներից 848-ը (89,7%) վերադարձվել է, 21-ը (2,2%) բավարարվել (11-ը՝ ամբողջությամբ, 10-ը՝ մասնակի), 4-ը՝ (0,4%) մերժվել,73-ը (7,7%) թողնվել է առանց քննության:

Այսպիսով, 2012 թվականի ընթացքում՝ 2011 թվականի համեմատությամբ, ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատում ստացված ընդհանուր բողոքների քանակն աճել է 28-ով (1231-1203=28) 2,3%, բողոքարկված դատական ակտերի թիվը՝ 90-ով (1067-977=90) 9,2%, վերադարձված բողոքների քանակը՝ 14-ով (991-977=14) 1,5%: Վարույթ ընդունված բողոքների թիվն աճել է 27-ով (72-45=27) 60%, մերժված բողոքների թիվը՝ 3-ով (16-13=3) 23.1%, ամբողջությամբ բավարարվածների թիվը՝ 4-ով (20-16=4) 25%, իսկ մասնակի բավարարվածների թիվը՝ 17-ով (29-12=17) 141.7%:

Դատախազության կողմից բերված բողոքների թիվը նվազել է 24-ով (162-138=24) 14,8%: Դատախազության կողմից բերված բողոքներից վերադարձված բողոքների թիվը նվազել է 27-ով (128-101=27) 21.1%, մերժվածների թիվը՝ 1-ով (9-8=1) 11,1%, ամբողջությամբ բավարարվածների թիվն աճել է 1-ով (6-5=1) 20%, իսկ մասնակի բավարարվածների թիվը՝ 6-ով (8-2=6):

Դատավարության այլ մասնակիցների կողմից բերված բողոքների թիվն աճել է 104-ով (1093-1041=52) 5%: Դատավարության այլ մասնակիցների կողմից բերված բողոքներից վերադարձված բողոքների թիվն աճել է 42-ով (890-848=42) 4.9%, մերժվածների թիվը՝ 4-ով (8-4=4) 100%, ամբողջությամբ բավարարվածների թիվը՝ 3-ով (14-11=3) 27.3%, մասնակի բավարարվածների թիվը՝ 11-ով (21-10=11) 110%:

Այսպիսով, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանում 2012 թվականի ընթացքում ավարտված գործերով կայացված 2099 (1198+945-44=2099) դատական ակտերից վճռաբեկության կարգով բողոքարկվել է 1067-ը (50,1%), որոնցից բեկանվել է 49-ը (20+29=49) 4,6%, այսինքն՝ ՀՀ քրեական վերաքննիչ դատարանում 2012 թվականի ընթացքում ավարտված գործերի կայունությունը կազմում է 97,7% (2099-49=2050:2099*100=97,7%), իսկ բողոքարկված դատական ակտերի կայունությունը կազմում է 95,4% (1067-49=1018:1067*100=95,4%):

*Այսպիսով, քրեական գործերով և միջնորդություններով ընդհանուր կայունությունը կազմում է 98,1% (Քայլ 1-ին՝ ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի կողմից բեկանված դատական ակտերի թիվը՝289 (292-3= 289, նշված 3 թիվը կազմում է ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 3 դատական ակտերը բեկանելու և առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու դեպքին), գումարվել է ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի կողմից բեկանված դատական ակտերի թվին՝ 49-ը, ստացվել է 338 բեկանված դատական ակտ: Քայլ 2-րդ՝ ընդհանուր իրավասության դատարաններում ավարտված դատական ակտերի թվից՝ 17814-ից, հանվել է բեկանված դատական ակտերի թիվը՝ 338, ստացվել է 17476, այսինքն՝ 17476 դատական ակտ մնացել է օրինական ուժի մեջ, ուստի դատական ակտերի կայունությունը կկազմի 98,1% /17814-338=17476:17814*100=98,1%):*

ՀԱՍԵՍԱՏԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ 2011-2012 Թ.Թ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆՆԵՐ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

2012 թվականի ընթացքում ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններում ստացվել է 42105 քաղաքացիական գործ, որից՝

- 3158 գործով (7,5%) հայցադիմումը վերադարձվել է,
- 239 գործով (0,6%) հայցադիմումի ընդունումը մերժվել է,
- 38708 (91,9%) գործով հայցադիմումն ընդունվել է վարույթ:

Վարույթ ընդունված 38708 գործերից՝

- 26100-ով (67,4%) կայացվել են վճիռներ, այդ թվում՝ հայցի լրիվ բավարարմամբ՝ 15180-ը (վճիռների 58,2%), հայցի մասնակի բավարարմամբ՝ 2386-ը (վճիռների 9,1%), հայցի մերժմամբ՝ 2810-ը (վճիռների 10,8%), վարույթի կարճմամբ՝ 5724-ը (վճիռների 21,9%), ընդ որում՝ կարճված վարույթներից 1631-ով (վճիռների 6,2%) հաստատվել է կնքված հաշտության համաձայնությունը,
- 53 հայց թողնվել է առանց քննության,

(ընդհանուր առմամբ կայացվել է 29550 դատական ակտ՝ 3158+239+26100+53),

- 186 գործ ուղարկվել են ըստ ընդդատության, 31 գործ միացվել են մեկ վարույթում,

- 12338-ը՝ /վարույթ ընդունված գործերի 31,9%/ անավարտ է:

Համեմատության կարգով նշենք, որ ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններում 2011 թվականի ընթացքում ստացվել է 43030 քաղաքացիական գործ, որից՝

- 2667 գործով /6,2%/ հայցադիմումը վերադարձվել է,

- 261 գործով /0,6%/ հայցադիմումի ընդունումը մերժվել է,

- 40102 /93,2%/ գործով հայցադիմումն ընդունվել է վարույթ:

Վարույթ ընդունված 40102 գործերից 25993-ով /64,8%/ կայացվել են վճիռներ, այդ թվում՝ հայցի լրիվ բավարարմամբ՝ 15439-ը /վճիռների 59,4%/, հայցի մասնակի բավարարմամբ՝ 2904-ը /վճիռների 11,2%/, հայցի մերժմամբ՝ 2450-ը /վճիռների 9,4%/, վարույթի կարճմամբ՝ 5200-ը /վճիռների 20%/, ընդ որում՝ կարճված վարույթներից 1404-ով /վճիռների 5,4%/ հաստատվել է կնքված հաշտության համաձայնությունը,

- 28 հայց թողնվել է առանց քննության,

(ընդհանուր առմամբ կայացվել է 28949 դատական ակտ՝ 2667+261+25993+28),

- 13752-ը՝ /վարույթ ընդունված գործերի 34,3%/ փոխանցվել 2012 թվական:

Այսպիսով, 2012 թվականի ընթացքում առաջին ատյանի դատարաններում ստացված քաղաքացիական գործերի թիվը նվազել է 925-ով /43030-42105=925/՝ մոտ 2,1%-ով /925:43030*100=2,1%/: Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին որոշումների թիվը նվազել է 22-ով /261-239=22/՝ մոտ 8,4%: Վերադարձված հայցադիմումների թիվն ավելացել է 491-ով /3158-2667=491/՝ մոտ 18,4%:

Այսպիսով, 2012 թվականի ընթացքում կայացված 26100 վճիռներից կողմերի միջև հաշտության համաձայնություն է կնքվել 1631-ով՝ 6,2%-ով,այսինքն՝ մոտ 16 քաղաքացիական գործերից 1-ն ավարտվել է հաշտության համաձայնությամբ, 2011 թվականի ընթացքում կայացված 25993 վճիռներից կողմերի միջև հաշտության համաձայնություն է կնքվել 1404-ով՝ 5,4%-ով, այսինքն՝ մոտ 18 քաղաքացիական գործերից 1-ն ավարտվել է հաշտության համաձայնությամբ:

ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԱՐՁԱԿԵԼՈՒ ԴԻՄՈՒՄՆԵՐ

ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններում 2012 թվականի ընթացքում ստացվել է 58176 (փոխանցված 3289+ստացված 54887) վճարման

կարգադրություն արձակելու մասին դիմում, մինչդեռ 2011 թվականի ընթացքում ստացվել է 31036 վճարման կարգադրություն արձակելու մասին դիմում: Այսինքն՝ ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններում 2012 թվականին ստացված վճարման կարգադրությունների թիվն աճել է 27140-ով (58176-31036=27140) 87,4%:

ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐ

ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններում 2012 թվականի ընթացքում ստացվել է 2953 սնանկության վերաբերյալ դիմում, մինչդեռ 2011 թվականի ընթացքում՝ 2508 դիմում: Այսինքն՝ ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններում 2012 թվականին ստացված սնանկության վերաբերյալ դիմումների թիվն աճել է 445-ով (2953-2508=445) 17,7%:

ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

2012 թվականի ընթացքում ՀՀ վարչական դատարանում ստացվել է 19982 գործ, որից՝

- 763 գործով /3,8%/ հայցադիմումը վերադարձվել է,
- 471 գործով /2,4%/ հայցադիմումի ընդունումը մերժվել է,
- 18748 գործ /93,8%/ ընդունվել է վարույթ:

Վարույթ ընդունված 18748 գործերից՝

- 9836-ով /52,5% կայացվել են վճիռներ, այդ թվում՝ հայցի լրիվ բավարարմամբ՝ 4266-ը /վճիռների 43,4%/, հայցի մասնակի բավարարմամբ՝ 1218-ը /վճիռների 12,4%/, հայցի մերժմամբ՝ 1465-ը /վճիռների 14,9%/, վարույթի կարճմամբ՝ 2887-ը /վճիռների 29,3%/,

(ընդհանուր առմամբ կայացվել է 11070 դատական ակտ՝ 763+471+9836).

- 8912-ը՝ /ստացված գործերի 44,6%, վարույթ ընդունված գործերի 47,5%/ անավարտ է:

Համեմատության կարգով նշենք, որ ՀՀ վարչական դատարանում 2011 թվականի ընթացքում ստացվել է 15444 գործ, որից՝

- 665 գործով /4,3%/ հայցադիմումը վերադարձվել է,
- 490 գործով /3,2%/ հայցադիմումի ընդունումը մերժվել է,
- 14289 գործ /92,5%/ ընդունվել է վարույթ:

Վարույթ ընդունված 14289 գործից 6082-ով /42,6% կայացվել են վճիռներ, այդ թվում՝ հայցի լրիվ բավարարմամբ՝ 2380-ը /վճիռների 39,1%/, հայցի մասնակի բավարարմամբ՝ 1008-ը /վճիռների 16,6%/, հայցի մերժմամբ՝ 1024-ը /վճիռների 16,8%/, վարույթի կարճմամբ՝ 1670-ը /վճիռների 27,5%/,

(ընդհանուր առմամբ կայացվել է 7237 դատական ակտ՝ 665+490+6082).

- 8207-ը՝ /57,4%, ստացվածների 53,1%/ փոխանցվել է 2012 թվական:

Այսպիսով, 2012 թվականի ընթացքում վարչական գործերի թիվն ավելացել է 4538-ով (19982-15444=4538)՝ 29,4%-ով:

ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԱՐՁԱԿԵԼՈՒ ԴԻՄՈՒՄՆԵՐ

ՀՀ վարչական դատարանում 2012 թվականի ընթացքում ստացվել է 123102 վճարման կարգադրություն արձակելու դիմում, իսկ 2011 թվականի ընթացքում՝ 73426 վճարման կարգադրություն արձակելու դիմում: Այսինքն՝ ՀՀ վարչական դատարանում 2012 թվականին ստացված վճարման կարգադրությունների թիվն աճել է 49676-ով (123102-73426=49676) 67,6%:

ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆ

2012 թվականի ընթացքում ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանում ստացվել է 4180 գործ *((ընդհանուր իրավասության դատարաններում ավարտված քաղաքացիական գործերի 14%-ը* (4180:29550*100=14,1%)),որից՝

- 542 գործով /13%/ բողոքները վերադարձվել են և կրկին չեն ներկայացվել,

- 3520 /84,2%/ գործով բողոքներն ընդունվել են վարույթ,

-118 /2,8%/ գործով բողոքները մակագրվել են, որոնց վերաբերյալ դատարանը դեռևս դիրքորոշում չի հայտնել:

Վարույթ ընդունված 3520 բողոքներից՝

- 1757 գործով /վարույթ ընդունված գործերի 49,9%/ բողոքները մերժվել են,

- 524 գործով /14,9%/ դատական ակտն ամբողջությամբ բեկանվել է և գործն ուղարկվել է նոր քննության,

- 206 գործով /5,8%/ դատական ակտը մասնակի բեկանվել է և գործն ուղարկվել է նոր քննության,

- 44 գործով /1,2%/ դատական ակտը բեկանվել և գործի վարույթը կարճվել է,

- 263 գործով /7,5%/ դատական ակտը բեկանվել և փոփոխվել է,

- 20 գործով /0,6%/ դատական ակտը բեկանվել և թողնվել է առանց քննության,

- 133 գործով /3,8%/ միջանկյալ դատական ակտը վերացվել է,

- 62 գործով /1,8%/ վերաքննիչ վարույթը կարճվել է,

- 511 գործ /14,5%/ անավարտ է:

(ընդհանուր առմամբ կայացվել է 3551 (3520-511+542) դատական ակտ)

Այսինքն՝ ստացված 4180 գործերով կայացված դատական ակտերից բեկանվել է 1190-ը /28,5%/, 1757-ով /42%/ բողոքները մերժվել են, 542-ով /13%/ բողոքները վերադարձվել են, 62 գործով /1,5%/ վերաքննիչ վարույթը կարճվել է, 511 գործ /12,2%/ անավարտ է, 118 /2,8%/ գործով բողոքները մակագրվել են, որոնց վերաբերյալ դատարանը դեռևս դիրքորոշում չի հայտնել:

Համեմատության կարգով նշենք, որ 2011 թվականի ընթացքում ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանում ստացվել է 3767 գործ *((ընդհանուր իրավասության դատարաններում ավարտված քաղաքացիական գործերի 13%-ը* (3767:28949*100=13%)), որից՝

- 382 գործով /10,1%/ բողոքները վերադարձվել են և կրկին չեն ներկայացվել,

- 3323 /88,2%/ գործով բողոքներն ընդունվել են վարույթ:

Վարույթ ընդունված 3323 բողոքներից՝

- 1725 գործով /վարույթ ընդունված գործերի 52%/ բողոքները մերժվել են,

- 489 գործով /14,7%/ դատական ակտն ամբողջությամբ բեկանվել է և գործն ուղարկվել է նոր քննության,

- 210 գործով /6,3%/ դատական ակտը մասնակի բեկանվել է և գործն ուղարկվել է նոր քննության,

- 46 գործով /1,4%/ դատական ակտը բեկանվել և գործի վարույթը կարճվել է,

- 273 գործով /8,2%/ դատական ակտը բեկանվել և փոփոխվել է,

- 21 գործով /0,6%/ դատական ակտը բեկանվել և թողնվել է առանց քննության,

- 123 գործով /3,7%/ միջանկյալ դատական ակտը վերացվել է,

- 31 գործով /1%/ վերաքննիչ վարույթը կարճվել է,

- 405 գործ /12,2%/ փոխանցվել է 2012 թվական:

(ընդհանուր առմամբ կայացվել է 3300 (3323-405+382) դատական ակտ)

Այսինքն՝ ստացված 3767 գործերով կայացված դատական ակտերից բեկանվել է 1162-ը /30,8%/, 1725-ով /45,8%/ բողոքները մերժվել են, 382-ով /10,1%/ բողոքները վերադարձվել են, 31 գործով /0,8%/ վերաքննիչ վարույթը կարճվել է, 405 գործ /10,7%/ անավարտ է, 62 /1,8%/ գործով բողոքները մակագրվել են, որոնց վերաբերյալ դատարանը դեռևս դիրքորոշում չի հայտնել:

Այսպիսով, 2012 թվականի ընթացքում՝ 2011 թվականի համեմատությամբ, ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանում ստացված գործերի թիվն ավելացել է 413-ով (4180-3767=413) 11%, բեկանված դատական ակտերի քանակն ավելացել է 28-ով (1190-1162=28) 2,4%, մերժված բողոքների քանակն ավելացել է 32-ով (1757-1725=32) 1,8%:

Այսպիսով, ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններում 2012 թվականի ընթացքում ավարտված 29550 գործերից բողոքարկվել է 4180-ը (14.1%), որից բեկանվել է 1173-ը (28,1%), /1190-17=1173, նշված 17 թիվը կազմում է ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 17 դատական ակտերը բեկանելու և առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու դեպքին), այսինքն՝ ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններում 2012 թվականի ընթացքում ավարտված գործերի կայունությունը կազմում է 96% /29550-1173=28377:29550*100=96%/:

ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆ

2012 թվականի ընթացքում ՀՀ վարչական վերաքննիչ դատարանում ստացվել է 1820 գործ *(վարչական դատարանում ավարտված վարչական գործերի 16,4%-ը* (1820:11070*100=16,4%)), որից՝

- 160 գործով /8,8%/ բողոքները վերադարձվել են և կրկին չեն ներկայացվել,

- 1604 /88,1%/ գործով բողոքներն ընդունվել են վարույթ,

- 56 /3,1%/ գործով բողոքի ընթացքը լուծված չէ:

Վարույթ ընդունված 1604 բողոքներից՝

- 951 գործով /վարույթ ընդունված գործերի 59,3%/ բողոքները մերժվել են,

-70 գործով /4,4%/ դատական ակտն ամբողջությամբ բեկանվել է և գործն ուղարկվել է նոր քննության,

- 12 գործով /0,7%/ դատական ակտը մասնակի բեկանվել է և գործն ուղարկվել է նոր քննության,

- 5 գործով /0,3%/ դատական ակտը բեկանվել և գործի վարույթը կարճվել է,

- 167 գործով /10,4%/ դատական ակտը բեկանվել և փոփոխվել է,

- 115 գործով /7,2%/ միջանկյալ դատական ակտը վերացվել է,

- 15 գործով /0,9%/ վերաքննիչ վարույթը կարճվել է,

- 269 գործ /16,8%/ անավարտ է:

(ընդհանուր առմամբ կայացվել է 1495 (1604-269+160) դատական ակտ)

Այսինքն՝ստացված 1820 գործերով կայացված դատական ակտերից բեկանվել է 369-ը /20,3%/, 951-ով /52,3%/ բողոքները մերժվել են, 160-ով /8,8%/ բողոքները վերադարձվել են, 15 /0,8%/ գործով վերաքննիչ վարույթը կարճվել է, 325 /269+56/ գործ՝ /17,8%/ անավարտ է:

Համեմատության կարգով նշենք, որ 2011 թվականի ընթացքում ՀՀ վարչական վերաքննիչ դատարանում ստացվել է 1496 գործ *((վարչական դատարանում ավարտված վարչական գործերի 20,6%-ը* (1496:7237*100=20,6%)), որից՝

- 149 գործով /10%/ բողոքները վերադարձվել են և կրկին չեն ներկայացվել,

- 32 /2%/ գործով բողոքի ընթացքը լուծված չէ,

- 1315 /88%/ գործով բողոքներն ընդունվել են վարույթ:

Վարույթ ընդունված 1315 բողոքներից՝

- 706 գործով /վարույթ ընդունված գործերի 53,7%/ բողոքները մերժվել են,

- 64 գործով /4,9%/ դատական ակտն ամբողջությամբ բեկանվել է և գործն ուղարկվել է նոր քննության,

- 57 գործով /4,3%/ դատական ակտը մասնակի բեկանվել է և գործն ուղարկվել է նոր քննության,

- 18 գործով /1,4%/ դատական ակտը բեկանվել և գործի վարույթը կարճվել է,

- 166 գործով /12,6%/ դատական ակտը բեկանվել և փոփոխվել է,

- 100 գործով /7,6%/ միջանկյալ դատական ակտը վերացվել է,

- 4 գործով /0,3%/ վերաքննիչ վարույթը կարճվել է,
- 200 գործ /15,2%/ անավարտ է:

(ընդհանուր առմամբ կայացվել է 1264 (1315-200+149) դատական ակտ)

Այսինքն՝ստացված 1496 գործերով կայացված դատական ակտերից բեկանվել է 405-ը /27%/, 706-ով /47,2%/ բողոքները մերժվել են, 149-ով /10%/ բողոքները վերադարձվել են, 4 /0,3%/ գործով վերաքննիչ վարույթը կարճվել է, 232 /200+32/ գործ՝ /15,5%/ անավարտ է:

Այսպիսով, 2012 թվականի ընթացքում՝ 2011 թվականի համեմատությամբ, ՀՀ վարչական վերաքննիչ դատարանում ստացված գործերի թիվը ավելացել է 324-ով (1820-1496=324) 21,6%, բեկանված դատական ակտերի քանակը նվազել է 36-ով (405-369=36) 8,9%, մերժված բողոքների քանակն ավելացել է 245-ով (951-706=245) 25,8%:

Այսպիսով, ՀՀ վարչական դատարանում 2012 թվականի ընթացքում ավարտված 11070 գործերից բողոքարկվել է 1820-ը (16,4%), որից բեկանվել է 359-ը (19,7%)/369-10=359, նշված 10 թիվը կազմում է ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 10 դատական ակտերը բեկանելու և առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու դեպքին), այսինքն՝ ՀՀ վարչական դատարանում 2012 թվականի ընթացքում ավարտված գործերի կայունությունը կազմում է 96,7% /11070-359=10711:11070*100=96,7%/:

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱԼԱՏ

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատում 2012 թվականի ընթացքում ստացվել է 2928 վճռաբեկ բողոք, որից 1955-ը (66,8%)՝ ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանի դատական ակտերի դեմ, 881-ը (30,1%)՝ ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի դատական ակտերի դեմ, 19-ը (0,7%)՝ ՀՀ վարչական դատարանի դատական ակտերի դեմ, 21-ը (0,7%)՝ ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատական ակտերի դեմ, 7-ը (0,2%)՝ ՀՀ տնտեսական դատարանի դատական ակտերի դեմ, 45-ը (1,5%)՝ ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումների դեմ:

Համեմատության կարգով նշենք, որ 2011 թվականի ընթացքում ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատում ստացվել է 2690 վճռաբեկ բողոք, իսկ 2012 թվականի ընթացքում ստացվել է 2928 վճռաբեկ բողոք: Այսինքն՝ 2011 թվականի համեմատությամբ 2012 թվականին ներկայացված բողոքների թիվն աճել է 238-ով (2928-2690=238) 8,8 %:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատում 2012 թվականի ընթացքում ստացված 2928 վճռաբեկ բողոքներից մակագրվել է 2733-ը, այդ թվում 1816-ը (66,4%)՝ ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանի դատական ակտերի դեմ, 829-ը (30,3%)՝ ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի դատական ակտերի դեմ, 16-ը (0,6%)՝ ՀՀ վարչական դատարանի դատական ակտերի դեմ, 21-ը (0,8%)՝ ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատական ակտերի դեմ, 7-ը (0,3%)՝ ՀՀ տնտեսական դատարանի դատական ակտերի դեմ, 44-ը (1,6%)՝ ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումների դեմ:

Մակագրված 2733 բողոքներից 2474-ը (90,5%) վերադարձվել է (22-ը հետ է վերցվել մինչև վարույթ ընդունելը, 2474-22=2452), 156-ն (5,8%) ընդունվել է վարույթ, 85 (3,1%) բողոքի ընթացքը 2012 թվականի դեկտեմբերի 28-ի դրությամբ եղել է անավարտ, 18 (0,6%) բողոք վերադարձվել են թերությունները շտկելու համար: Թվով 195 (ստացված բողոքներ՝ 2928-2733 մակագրված բողոքներ=195) վճռաբեկ բողոքներով գործերը դեռևս չեն ստացվել և փոխանցվել են 2013 թվական:

Ընթացք տրված 2598 (2474+156-32) բողոքներից 59-ը (2,3%) բերվել է դատախազության կողմից, 206-ը (7,9%)՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից, 2333-ը (89,8%)՝ դատավարության այլ մասնակիցների կողմից:

Վարույթ ընդունված 156 բողոքներից (154 դատական ակտով)՝

- 45 բողոք (44 դատական ակտով) բավարարվել է (վարույթ ընդունվածի՝ 28,8%) (այդ թվում մասնակի) և դատական ակտը բեկանվել է,

- 3 (1,9%) բողոք բավարարվել է (այդ թվում մասնակի) և դատական ակտը բեկանվել է մասնակի,

- 3 (2%) բողոք մերժվել է և դատական ակտը մնացել է անփոփոխ,

- 27 (17,3%) բողոք բավարարվել է և դատական ակտը բեկանվել է՝ օրինական ուժ է տրվել առաջին ատյանի դատարանի դատական ակտերին,

- 16 (10,3%) բողոք բավարարվել է և դատական ակտը բեկանվել ու փոփոխվել է,

- 4 բողոք (3 դատական ակտով) (2,6%) բավարարվել է՝ դատական ակտը բեկանվել և գործի վարույթը կարճվել է,

- 18 (11,5%) բողոք բավարարվել է և միջանկյալ դատական ակտը վերացվել է,

- 2 (1,3%) վարույթ ընդունված բողոք հետ է վերցվել,

- 6 (3,8%) բողոքը բավարարվել է՝ վերանայվել է ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումը,

- 32 (20,5%) բողոք տվյալ ժամանակահատվածում եղել են անավարտ:

Փաստորեն, 2012 թվականի ընթացքում ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից վարույթ ընդունված 156 վճռաբեկ բողոքներից 119-ը (45+3+27+16+4+18+6=119) 76,3% բավարարվել են և բեկանվել են համապատասխան դատական ակտերը:

Վարույթ ընդունված 156 բողոքներից 12-ը (7,7%) բերվել է դատախազության կողմից, 3-ը (1,9%)՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից, 141-ը (90,4%)՝ դատավարության այլ մասնակիցների կողմից:

Վերադարձված 2474 բողոքներից 46-ը (1,9%) բերվել է դատախազության կողմից, 198-ը (8%)՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից, 2230-ը (90,1%)՝ դատավարության այլ մասնակիցների կողմից:

ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատական ակտերի դեմ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատում ստացված 21 բողոքները վերադարձվել են:

ՀՀ վարչական դատարանի դատական ակտերի դեմ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատում ստացված 19 բողոքներից 16 վերադարձվել են, 3-ը փոխանցվել են 2013 թվական:

ՀՀ տնտեսական դատարանի դատական ակտերի դեմ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատում ստացված 7 բողոքներն էլ վերադարձվել են:

ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումների դեմ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատում ստացված 45 բողոքներից 37-ը վերադարձվել են, 1 վճռաբեկ բողոքով գործը դեռևս չի ստացվել և փոխանցվել է 2013 թվական, 7-ն ընդունվել է վարույթ, որից 6 բողոք բավարարվել է՝ վերանայվել է ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումը, 1 բողոք մերժվել է:

ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանի դատական ակտերի դեմ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատում ստացված 1955 բողոքներից մակագրվել է 1816 վճռաբեկ բողոք:

Մակագրված 1816 բողոքներից 1623-ով (որից 19-ը հետ է վերցվել) (89,4%) վճռաբեկ բողոքը վերադարձվել է, 113-ն (6,2%) ընդունվել է վարույթ, որից քննարկվել է 88-ը (վարույթ ընդունվածների 77,8%), 70 (3,8%) վարույթ չընդունված բողոք տվյալ ժամանակահատվածում եղել է անավարտ, 10 (0,6%) բողոք վերադարձվել է թերությունները շտկելու համար:

Քննարկված 88 բողոքներից՝

- 38 (քննարկվածի՝ 43,2%) (37 ակտով) բողոք բավարարվել է (այդ թվում մասնակի) և դատական ակտը բեկանվել է,

- 3 (3,4%) բողոք բավարարվել է (այդ թվում մասնակի) և դատական ակտը բեկանվել է մասնակի,

- 2 (2,3%) բողոք մերժվել է՝ դատական ակտը մնացել է անփոփոխ,

-17 (19,3%) բողոք բավարարվել է, դատական ակտ բեկանվել է՝ օրինական ուժ է տրվել առաջին ատյանի դատարանի դատական ակտերին,

- 14 (15,9%) բողոք բավարարվել է, դատական ակտ բեկանվել է և փոփոխվել,

- 4 (4,5%) (3 ակտով) բողոք բավարարվել է, դատական ակտ բեկանվել է և գործի վարույթը կարճվել է,

- 2 (2,3%) բողոք վարույթ ընդունելուց հետո հետ է վերցվել,

- 8 (9,1%) բողոք բավարարվել է և միջանկյալ դատական ակտը վերացվել է:

Այսպիսով, ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատական ակտերի դեմ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատում մակագրված 1816 բողոքներով բեկանվել է 82 (4,5%) դատական ակտ, որը կազմում է քննարկված 88 բողոքների 93,1%-ը:

Մակագրված 1816 բողոքներից 2-ով (0,1%) վճռաբեկ բողոք մերժվել է, որը կազմում է քննարկված 88 բողոքների 2,3%-ը:

Համեմատության կարգով նշենք, որ 2011 թվականի ընթացքում ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատական ակտերի դեմ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատում ստացվել է 1932 վճռաբեկ բողոք, իսկ 2012 թվականի ընթացքում ստացվել է 1955 վճռաբեկ բողոք: Այսինքն՝ 2011 թվականի

համեմատությամբ 2012 թվականին ներկայացված բողոքների թիվն աճել է 23-ով (1955-1932=23) 1,2 %:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատական ակտերի դեմ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատում 2012 թվականի ընթացքում մակագրված 1816 վճռաբեկ բողոքներից 26-ը (1,4%) բերվել է դատախազության, 8-ը (0,4%)՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից:

Դատախազության բերած 26 վճռաբեկ բողոքներից 19-ը (73,1%) վերադարձվել է, 7-ն (26,9%) ընդունվել է վարույթ, որոնք անավարտ են:

Համեմատության կարգով նշենք, որ 2011 թվականի ընթացքում ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանի դատական ակտերի դեմ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատ դատախազության կողմից բերվել է 7 վճռաբեկ բողոք, որոնցից 5-ը (71,5%) վերադարձվել է, 2-ն ընդունվել է վարույթ: Վարույթ ընդունվածներից 1-ը բավարարվել է՝ բեկանվել և օրինական ուժ է տրվել ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի վճռին, 1-ն եղել է անավարտ:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից բերված բոլոր 8 (100%) վճռաբեկ բողոքները վերադարձվել են:

Համեմատության կարգով նշենք, որ 2011 թվականի ընթացքում ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից բերված 8 վճռաբեկ բողոքներից 6-ը (75%) վերադարձվել են, 2-ն ընդունվել է վարույթ: Վարույթ ընդունվածներից 1-ով բողոքը բավարարվել է և դատական ակտը բեկանվել է, 1-ն եղել է անավարտ:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի դատական ակտերի դեմ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատում ստացված 881 բողոքներից մակագրվել է 829 վճռաբեկ բողոք:

Մակագրված 829 բողոքներից 770-ով (որից 3-ը հետ է վերցվել) (92,9%) վճռաբեկ բողոքը վերադարձվել է, 36-ն (4,3%) ընդունվել է վարույթ, որից քննարկվել է 29-ը (վարույթ ընդունվածների 80,5%), 15 (1,8%) վարույթ չընդունված բողոք տվյալ ժամանակահատվածում եղել է անավարտ, 8 (1%) բողոք վերադարձվել է թերությունները շտկելու համար:

Քննարկված 29 բողոքներից՝

- 7 (քննարկվածի՝ 24,1%) բողոք բավարարվել է (այդ թվում մասնակի) և դատական ակտը բեկանվել է,

- 10 (34,5%) բողոք բավարարվել է և միջանկյալ դատական ակտ վերացվել է,

-10 (34,5%) բողոք բավարավել է, դատական ակտը բեկանվել է՝ օրինական ուժ է տրվել առաջին ատյանի դատարանի դատական ակտերին,

- 2 (6,9%) բողոք բավարարվել է, դատական ակտը բեկանվել է և փոփոխվել:

Այսպիսով, ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի դատական ակտերի դեմ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատում մակագրված 829 բողոքներով բեկանվել է 29 (3,5%) դատական ակտ, որը կազմում է քննարկված 29 բողոքների 100 %-ը:

Համեմատության կարգով նշենք, որ 2011 թվականի ընթացքում ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի դատական ակտերի դեմ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատում ստացվել է 663 վճռաբեկ բողոք, իսկ 2012 թվականի ընթացքում ստացվել է 881 վճռաբեկ բողոք: Այսինքն՝ 2011 թվականի համեմատությամբ 2012 թվականին ներկայացված բողոքների թիվն աճել է 218-ով (881-663=218) 32,9 %:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի դատական ակտերի դեմ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատում 2012 թվականի ընթացքում մակագրված 829 վճռաբեկ բողոքներից 33-ը (4%) բերվել է դատախազության, 198-ը (23,9%)՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից, իսկ 598-ը (72,1%)՝ այլ անձանց կողմից:

Դատախազության կողմից բերված 33 վճռաբեկ բողոքներից 27-ը (81,8%) վերադարձվել է, 1 բողոք փոխանցվել է 2013 թվական, 5-ն ընդունվել է վարույթ, որից 2 բողոք բավարարվել է՝ բեկանվել և օրինական ուժ է տրվել ընդհանուր իրավասության դատարանի վճռին, 1 բողոք բավարարվել է՝ դատական ակտը բեկանվել և ուղարկվել է նոր քննության, 2 բողոք դեռևս չի քննվել:

Համեմատության կարգով նշենք, որ 2011 թվականի ընթացքում ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի դատական ակտերի դեմ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատ դատախազության կողմից բերվել է 31 վճռաբեկ բողոք, որոնցից 23-ը (74,1%) վերադարձվել է, 1-ն ընդունվել է վարույթ, որը բավարարվել է՝ բեկանվել և օրինական ուժ է տրվել ընդհանուր իրավասության դատարանի վճռին, 7 բողոքի քննությունն եղել է անավարտ:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից բերված 198 վճռաբեկ բողոքներից 190-ը (96%) վերադարձվել են, 3-ն (1,5%) ընդունվել են վարույթ, որից 1 բողոք բավարարվել է՝ բեկանվել և օրինական ուժ է տրվել ընդհանուր իրավասության դատարանի վճռին, 1 բողոք բավարարվել է՝ դատական ակտը բեկանվել և ուղարկվել է նոր քննության, 1 բողոք դեռևս չի քննվել:

Բացի այդ, 2 բողոք ժամկետով վերադարձվել են, 3 բողոք փոխանցվել է 2013 թվական:

Համեմատության կարգով նշենք, որ 2011 թվականի ընթացքում ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից բերված 104 վճռաբեկ բողոքներից 90-ը (86,5%) վերադարձվել են, 7-ն ընդունվել են վարույթ, որոնք բավարարվել են, 7-ի քննությունն եղել է անավարտ:

Այսպիսով, ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանում 2012 թվականի ընթացքում կայացված 3551 (3520-511+542) դատական ակտերից բողոքարկվել է 1955-ը (55%), որից բեկանվել է 82-ը (4,2%), այսինքն՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանում 2012 թվականի ընթացքում ավարտված գործերի կայունությունը կազմում է 97,7% /3551-82=3469:3551*100=97,7%/, իսկ բողոքարկված դատական ակտերից կայունությունը կազմում է 95,8% /1955-82=1873:1955*100=95,8%/:

Այսպիսով, ՀՀ վարչական վերաքննիչ դատարանում 2012 թվականի ընթացքում կայացված 1495 (1604-269+160) դատական ակտերից բողոքարկվել է 881-ը (59%), որից բեկանվել է 29-ը (3,3%), այսինքն՝ ՀՀ վարչական վերաքննիչ դատարանում 2012 թվականի ընթացքում ավարտված գործերի կայունությունը կազմում է 98,1% /1495-29=1466:1495*100=98,1%/, իսկ բողոքարկված դատական ակտերից կայունությունը կազմում է 96,7% /881-29=852:881*100=96,7%/:

Այնուհետև, քաղաքացիական գործերով ընդհանուր կայունությունը կազմում է 95,8% /Քայլ 1-ին՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից բեկանված դատական ակտերի թիվը՝ 1173 /1190-17=1173, նշված 17 թիվը կազմում է ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 17 դատական ակտերը բեկանելու և առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու դեպքին), գումարվել է ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի կողմից քաղաքացիական գործերով բեկանված դատական ակտերի թվին՝ 82, ստացվել է 1255

*բեկանված դատական ակտ, Քայլ 2-րդ՝ ընդհանուր իրավասության դատարաններում ավարտված դատական ակտերի թվից՝ 29550-ից, հանվել է 1255 բեկանված դատական ակտերի թիվը, ստացվել է 28295, այսինքն՝ 28295 դատական ակտ թողնվել է անփոփոխ, ուստի դատական ակտերի կայունությունը կկազմի 95,8% /29550-1255=28295:29550*100=95,8%/:*

*Այնուհետև, վարչական գործերով ընդհանուր կայունությունը կազմում է 96,5% /Քայլ 1-ին՝ ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի կողմից բեկանված դատական ակտերի թիվը՝ 359 /369-10=359, նշված 10 թիվը կազմում է ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 10 դատական ակտերը բեկանելու և առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու դեպքին), գումարվել է ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի կողմից բեկանված դատական ակտերի թվին՝ 29-ը, ստացվել է 388 բեկանված դատական ակտ, Քայլ 2-րդ՝ ՀՀ վարչական դատարանում ավարտված դատական ակտերի թվից՝ 11070-ից, հանվել է 388 բեկանված դատական ակտերի թիվը, ստացվել է 10682, այսինքն՝ 10682 դատական ակտ թողնվել է անփոփոխ, ուստի դատական ակտերի կայունությունը կկազմի 96,5% /11070-388=10682:11070*100=96,5%/:*

<u>ԸՆԴՀԱՆՈՒՐ</u>

Այսպիսով, առաջին ատյանի դատարանների դատական ակտերի ընդհանուր կայունությունը կազմում է *96,6%*

/քայլ 1-ին՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից բեկանված դատական ակտերի թիվը՝ 1173, գումարվել է ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի կողմից բեկանված դատական ակտերի թվին՝ 359, գումարվել է ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից բեկանված դատական ակտերի թվին՝ 289, գումարվել է ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի կողմից բեկանված քաղաքացիական գործերով դատական ակտերի թվին՝ 82, գումարվել է ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի կողմից բեկանված վարչական գործերով դատական ակտերի թվին՝ 29, գումարվել է ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի կողմից բեկանված միջնորդություններով և քրեական գործերով դատական ակտերի թվին՝ 49, ստացվել է 1981 բեկանված դատական ակտ,

քայլ 2-րդ՝ առաջին ատյանի դատարաններում ավարտված դատական ակտերի թվից՝ *58434*-ից /29550+11070+3281+14533/, հանվել է 1981 բեկանված դատական ակտերի թիվը, ստացվել է 56453, այսինքն՝ 56453 դատական ակտ թողնվել է անփոփոխ, ուստի դատական ակտերի կայունությունը կկազմի 96,6% /58434-1981=56453:58434*100=96,6%/: